Արձանագրություն N 4

ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.11.2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Անտոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մեսրոպյան
Լ. Խալաթովա
Ք. Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝ Գ. Խաչատրյան
Հանձնաժողովի անդամ՝

1. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Կ. Անտոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 11.11.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել էր Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

1.2 Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի 20.11.2019թ. նիստին արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) բացակայում են առաջադրված մասնագետների հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման վկայականները,

բ) առաջադրված մասնագետների վերաբերյալ Մասնակցի մոտ կատարած աշխատանքները հավաստող ղեկավարի կողմից ստորագրված և կնքված նամակների կնիքներն ընթեռնելի չեն,

գ) ներկայացված աշխատակիցներ՝ Գնել Խաչատրյանի, Հրաչիկ Դավթյանի և Կարինե Չիլինգարյանի աշխատանքային պայմանագրերի և ինքնակենսագրությունների (CV-ների) միջև

առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես՝ աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել է <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ն, իսկ ինքնակենսագրություններում (CV-ներում) նշված են, որ աշխատակիցները նույն ժամանակահատվածում աշխատել են <<Սոս-Աուդիտ>> ՍՊԸ-ում:

Համաձայն Կարգի 47-րդ կետի՝ 20.11.2019թ. ծանուցվել է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Կ. Անտոնյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Կ. Անտոնյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Կ. Անտոնյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Կ. Անտոնյան

Անդամ՝ ---------- Գ. Մեսրոպյան

---------- Լ. Խալաթովա

---------- Ք. Աբրահամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան